

ԱՐԱՄԵԱՆ ԿՊՐՈՅՆ ՈՒ ՆՐԱ
60 ԱՄԵԱԿԸ

Լսում ենք որ, Արամեան և Ս. Աննայեան երկուսն էլ զպրոցների նորընտիր հոգաբարձութիւնը արդէն հաստատուած է ու իւր գործին անցնելու վրայ է:

Դպրոցական անյետաձգելի մի շարք խնդիրների լուծումից յետոյ հոգաբարձութեան վրայ պարտք է ծանրանում տօնել դպրոցների 60 ամեակը: Արամեան դպրոցը Ատրպատականի հայութեան մտքի ամենահին լուսատու ջահն է և իբրև այդպիսին, նա արժանի է հասարակութեան սրտին մօտիկ մի հաստատութիւն լինելու փառքին: Վստահութեամբ կարող ենք

ասել, որ նա տէրն է այդ փառքի, ուստի և նրա 60 ամեակի տօնումը լայն գրկաբացութեամբ կընդունուի Պարսկաստանի հայութեան կողմից: Անհրաժեշտ է խելացի կազմակերպութիւն այդ գործի շուրջը և նիւթական սուղ դրութեան մէջ գտնուող այդ հաստատութիւնը ամենայն հաւանականութեամբ կստանայ զգալի չափով խոշոր մի նպաստ ևս: Այս խնդիրը անյետաձգելի է թէ ըստ էութեան և թէ նպատակայարմարութեան տեսակետից, ուստի և հոգաբարձութեան լուրջ ուշադրութիւնը պէտք է հրաւիրէ իւր վրայ:

Մեր կարծիքով, որքան լայն կերպարանք տրուի հարցին, այդքան աւելի երաշխաւորուած կլինի ձեռնարկութեան յաջողութիւնը: Բարոյական պարտք է

ծանրանում այդ դպրոցներից մասւոր մնունդ ստացած իւրաքանչիւր անհատի վրայ երախտագիտութեան պերճախօս ապացոյց տալ իւր ուժերը ներածին չափով օժանդակելով այն մարմին, որը գործի գլուխ կանցնի: Եւսն դրն ու մաքուր զգացմունքներով գործին մօտենալը յաջող ընթացքի գրաւական են:

Նախկին աւակիւրս.

Լ Ո Ւ Ր Ե Ր

Նախորդ համարի «Յանգաւոր ֆելիտօնում» յիշուած էին մի շարք անուններ, որոնք ակնարկում էին որոշ անձնաւորութեանց, բայց դրանցից մի քանիսը, որոնց թւում և «Բախկալ Մամին» ոչ ոքի համար չէին գրուած, այլ

առաջ էին բերուած միայն ոտանաւորի յանդը նմանահնչիւն դարձնելու համար:

Թեմ. տպարանի և առհասակ առաջնորդարանի հաշիւների մասին յաջորդիւ:

Երկուշաբթի օրը, ամսոյս 23-ի գիշերը ժամը 9-ին Թաւրիզ ժամանեց յայտնի հայ հրապարակախօս և «Մշակ»-ի խմբագիր պ. Հ. Առաքելեանը:

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան